# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆՆ ՔԱՈՒՆԹԵՐՓԱՐԹ ԻՆԹԵՐՆԵՇՆԼԻ ԿՈՂՄԻՑ ԱՂԵՏԻ ՓԱԹԵԹԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՓՈԽԱՆՑՄԱՆ

**ՀՀ, ք. Երևան** **«10» Փետրվար, 2014թ**

Քաունթերփարթ Ինթերնեշնլ Ինկ. (այսուհետ՝ Քաունթերփարթ), հասցեն՝ Ա.Մ.Ն, Վերջինյա, 22202, Արլինգտոն, Քրիստալ Դրայվ 2345, բն, 301, ի դեմս Ֆինանսական Տնօրեն Քեթլին Ռոուանի՝ մի կողմից և Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) արտակարգ իրավիճակների նախարարությունը (այսուհետ՝ ԱԻՆ) հասցեն՝ ք. Երևան Դավիթաշենի 4-րդ թաղամաս 0054,Ա. Միկոյան 109/8ի դեմս ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Ա. Երիցյանի, մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագիրը սահմանում է ստորագրող կողմերի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը Քաունթերփարթի պահեստից ԱԻՆ-ի պահեստ ԱՄՆ Պետական դեպարտամենտի կողմից տրամադրված Քաունթերփարթի հայաստանյան պահեստից Աղետի Փաթեթի փոխանցման (տես՝ Հավելված #1 գույքացուցակը) վերաբերյալ: Քաունթերփարթը, ԱԻՆ-ի աջակցությամբ փորձում է նպաստել Հայաստանի Հանրապետությունում աղետների արդյունավետ արձագանքմանը:

1.2Աղետի Փաթեթը նախատեսված է արտակարգ իրավիճակների ժամանակ օգնության արագ և արդյունավետ արձագանքման համար

1.3 Աղետի Փաթեթը ենթակա է օգտագործման միայն ՀՀ տարածքում և ենթակա չէ արտահանման:

# AGREEMENT

## ON THE TRANSFER OF ITEMS FROM THE DISASTER PACKAGE MANAGED BY CONTERPART INTERNATIONAL TO MINISTRY OF EMERGENCY SITUATIONS OF THE REPUBLIC OF ARMENIA

**RA, Yerevan city** **«10» February, 2014**

This Memorandum of Agreement is entered between Counterpart International, Inc. located at 2345 Crystal Drive, Suite 301, Arlington, Virginia, 22202, U.S.A. (herein referred to as Counterpart), in the person of the Chief Financial Officer, Kathleen Rowan, and Ministry of Emergency Situations of the Republic of Armenia, located at 109/8 A. Mikoyan Str., 4th Block of Davitashen, 0054 Yerevan, Republic of Armenia (herein referred to as MES), in the person of RA Minister of Emergency Situations Armen Yeritsyan, to the following effect:

1. Subject of Agreement

1.1 The Memorandum of Agreement determines mutual rights, obligations, and responsibilities of the signing Parties related to the transfer of the commodities from the Department of State Pre-staged Disaster Package (see Attachment #01 Disaster Package Inventory List) stored at the Counterpart warehouse in Armenia to the warehouses of MES. Counterpart, in support of the initiative of MES is trying to enhance the disaster response capacity in the Republic of Armenia.

1.2 Disaster Package was designed to expedite the delivery of relief commodities upon disaster declaration.

1.3 The disaster package commodities are only intended to be used in Armenia and are not to be exported.

2. Կողմերի պարտականությունները և իրավունքները

2.1 ՀՀ ԱԻՆ-ը պարտավոր է՝

2.1.1 Քաունթերփարթի պահեստից (հասցեն՝ Արարատի մարզ, Այնթապ 1) ՀՀ ԱԻՆ Պահեստ (հասցեն՝ ք. Երևան Դավիթաշենի 4-րդ թաղամաս 0054,Ա. Միկոյան 109/8) Աղետի Փաթեթի բեռնման/բեռնաթափման և տեղափոխման գործնթացն իրականացնել իր միջոցներով:

2.1.2 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված գործընթացն իրականացնել մինչև 2014 թվականի մարտի 14-ը: Հանձնումից հետո ԱԻՆ-ը կստորագրի ստացական փաթեթը ընդունելու վերաբերյալ:

2.1.3 Պահպանել Աղետի Փաթեթի գույքի ամբողջականությունը:

2.1.4 Աղետի Փաթեթի գույքն օգտագործել դրա նշանակությանը համապատասխան՝ աղետների կամ արտակարգ իրավիճակների դեպքում:

2.2 Քաունթերփարթը պարտավոր է՝

2.2.1 Աղետի Փաթեթը հանձնել ՀՀ ԱԻՆ-ը:

2.3 Քաունթերփարթն կարող է՝

2.3.1 Մինչև Աղետի Փաթեթի տեղափոխումը ՀՀ ԱԻՆ պահեստներ, ՀՀ-ում աղետների կամ արտակարգ իրավիճակների դեպքում իրականացնել Աղետի Փաթեթից բաշխումներ՝ ՀՀ ԱԻՆ-ը ներկայացնելով գույքագրված Աղետի Փաթեթի նոր ցուցակը:

2.3.2 Աղետի Փաթեթը ՀՀ ԱԻՆ-ին փոխանցելուց հետո Քաունթերփարթն Աղետի Փաթեթի ծախսերի հետ կապված ոչ մի պատասխանատվություն չի կրում:

2. Obligations of the parties

2.1 MES is obligated:

2.1.1 To pick up disaster package commodities from Counterpart's Armenia warehouse located at 1 First Street, Aintap, Ararat, 378336, Armenia at MES's expense. MES will, at its own expense, provide loading/unloading and transportation of the Disaster Package commodities from the Counterpart warehouse to the warehouses of MES located at Ministry of Emergency Situations Base, 109/8 A. Mikoyan Str., 4th Block of Davitashen, 0054 Yerevan, Republic of Armenia.

2.1.2 The process mentioned in clause 2.1.1 should be actualized about but no later than March 14, 2014. Upon transfer, MES will sign an acknowledgment of receipt and acceptance of commodities.

2.1.3 To maintain the integrity and safety of the Disaster Package commodities.

2.1.4 To use the Disaster Package Commodities in response to disasters or emergencies.

2.2 Counterpart is obligated:

2.2.1 To handover the Disaster Package commodities to MES.

2.3 Counterpart may:

2.3.1 Distribute part of or all of the existing Disaster Package commodities in the event disasters occur in Armenia prior to transfer of Disaster Package commodities to MES. Counterpart will provide an updated "Attachment #01 Disaster Package Inventory List" to MES whenever such instances occur.

2.3.2 Counterpart is not liable for any expenses associated with the Disaster Package commodities after the transfer of the Disaster Package commodities to MES.

3. Համաձայնագրի գործողության ժամկետը

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում երկու Կողմերի ստորագրման պահից:

3.2 Սույն համաձայնագիրը գործելու է ստորագրման պահից, ուժի մեջ է լինելու մինչև 2014 թվականի Մարտի 14-ը և կարող է երկարաձգվել երկու Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

3.3 Երկու Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն համաձայնագիրը՝ երեսուն (30) օր առաջ գրավոր կերպով ծանուցելով մյուս Կողմին: Այս գործընթացը չի կարող հանգեցնել պատասխանատվության:

4. Եզրափակիչ դրույթներ

4.1 Յուրաքանչյուրի Կողմ կնշանակի անձ, ով պատասխանատու կլինի սույն Համաձայնագրում նշված դրույթների արդյունավետ իրագործմանը: Երկու Կողմերից նշանակված են՝

Արմինե Խաչատրյան
ՀՄՕ ծրագրի հայաստանյան գրասենյակի ղեկավար
Քաունթերփարթ Ինթերնեշնլ
Դեմիրճյան 62
Երևան, Հայաստան 0002
Հեռախոսահամար: +374 (10) 51 90 26
Էլ. հասցե: akhachatryan@counterpart.org

Սերգեյ Ազարյան
Արտակարգ իրավիճակների
նախարարության Փրկարար Ծառայության
տնօրեն
ՀՀ Արտակարգ իրավիճակների
նախարարություն
ք. Երևան 0054, Ա. Միկոյան 109/8
(Դավիթաշենի 4-րդ թաղամաս)
Հեռախոսահամար: +374 (10) 31-78-01
Էլ. հասցե: sergey.azaryan@mes.am,
interdep@mes.am

4.2Սույն համաձայնագիրը կազմվել է ՀՀ-ում, երկու օրինակից՝ յուրաքանչյուրը չորս էջից, և նախատեսված է երկու Կողմերի համար: Երկու օրինակներն էլ ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3. Terms

3.1 This Memorandum of Agreement shall enter into force on the day both Parties have signed it.

3.2 This Memorandum of Agreement will remain in effect from the date of signature until March 14, 2014 and may be extended by mutual agreement of the Parties.

3.3 Either Party may terminate the Agreement within thirty (30) days written notice to the other Party. Such termination will not be subject to penalties or liabilities.

4. Final Provisions

4.1 Each Party will appoint a person to serve as the official point of contact and coordinate the activities of each organization and to receive all notices in connection with the implementation of the terms of this Memorandum of Agreement. The appointees of each organization are as follows:

Armine Khachatryan
Country Program Director, CHAP Armenia
Counterpart International, Inc
62 Demirchyan
Yerevan, 0002, Armenia
Telephone: +374 (10) 51 90 26
Email: akhachatryan@counterpart.org

Sergey Azaryan
Director of Rescue Services Department
Ministry of Emergency Situations of the
Republic of Armenia
109/8 A. Mikoyan Str., 4th Block of
Davitashen,
Yerevan, 0054, Republic of Armenia
Telephone: +374 (10) 31-78-01
Email: sergey.azaryan@mes.am,
interdep@mes.am

4.2 The Memorandum of Agreement is prepared in the Armenian Republic on four pages in two copies, one for each Party. Both copies are of the same legal effect.

4.3 Սույն համաձայնագիրը փոխարինում է նախկինում երկու Կողմերի միջև կնքած բոլոր համաձայնագրերին ու պայմանագրերին:

4.4 Սույն համաձայնագրում կատարված յուրաքանչյուր փոփոխություն կամ այլ փաստաթուղթ կազմում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

4.5 Սույն համաձայնագրում կատարված յուրաքանչյուր փոփոխություն կամ լրացում ներկայացվում է գրավոր ձևով և հաստատվում երկու Կողմերի կողմից:

4.3 This Memorandum of Agreement between the two Parties supersedes all prior or contemporaneous understandings or agreements.

4.4 All amendments to the Agreement or other documents identified as part of the Agreement constitute its integral part.

4.5 Any alterations and amendments to this Agreement are to be introduced in written form and approved by representatives of both Parties.

5. Կողմերի վավերապայմանները

5. Requisites of Parties

ՔԱՈՒՆԹԵՐՓԱՐԹ ԻՆԹԵՐՆԱՇՆԼ ԻՆԿ.

**Քեթլին Ռոուան**
**Ֆինանսական Տնօրեն**

Ստորագրություն:

**COUNTERPART INTERNATIONAL INC.**

**Kathleen Rowan**
**Chief Financial Officer**

**Signature:**

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Արմեն Երիցյան**

**ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար**

**Ստորագրություն:**

**MINISTRY OF EMERGENCY SITUATIONS OF THE REPUBLIC OF ARMENIA**

**Armen Yeritsyan**
**RA Minister of Emergency Situations**

**Signature:**